

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 9-ին ժամը 15:10-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Նիստին մասնակցում էին.

Արրահամյան Հակոբ	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Ավագյան Լիլիթ	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Բարսեղյան Լևոն	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Բարսեղյան Վիլիկ	«Արարատ» ՋՕԸ
Համբարձումյան Վարդան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ
Հովհաննիսյան Անդրանիկ	«Բնապահպան տնտեսագետների երիտասարդական միություն» ՀԿ
Հովհաննիսյան Արայիկ	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
Հովհաննիսյան Վեհանուշ	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ
Մարտիրոսյան Սեյրան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Նազարյան Կարեն	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Ոսկանյան Աշոտ	«Ազրոզարգացում» ՀԿ
Հրայրա Ջավադյան	Կիրառական հետազոտությունների և ազրոբիզնեսի հիմնադրամ
Սողոմոնյան Վանիկ	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Վարդանյան Նազելի	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Հովսեփյան Արա	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Ռասին Ալեքս	Հայաստանի ծրագրի տնօրեն, ՀՄԿ
Հիրնիակ Մայրոն	Հայաստանի ծրագրի փոխտնօրեն, ՀՄԿ
Աճեմյան Նանե	Մամլո քարտուղար, ՀՄՀ-Հայաստան
Գրիգորյան Վիկտորյա	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան
Ալթունյան Նաիրա	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան
Ղազարյան Էլեն	Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում ԻԱՄ

Նիստին մասնակցում էին նաև ընտրական հանձնաժողովի անդամները՝ Հովհաննիսյան Սիիրան, Լեփեջյան Արտեմիս, Արզարյան Անահիտ, Պեպանյան Նունե,

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուներ խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրություններ

29-ը սեպտեմբերի, 2007թ.
ք. Երևան

Արձանագրություն

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության ընտրական հանձնաժողովի նիստի

2007 թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության ընտրական հանձնաժողովի (ԸՀ) նիստը՝ մասնակցությամբ հանձնաժողովի անդամներ

Միհրան Հովհաննիսյանի, «Եղվարդ» ՋՕԸ-ի տնօրեն (ընտրական հանձնաժողովի նախագահ)

Անահիտ Աբգարյանի, «Թալին-հույս» ՀԿ նախագահ (ընտրական հանձնաժողովի քարտուղար)

Արտեմիս Լեփեջյանի, «Ս. Սանդուխտ տիկնանց միություն» ՀԿ նախագահ

Նունե Պեպանյանի, «Լուսաստղ» ՀԿ նախագահ

Վահե Թազվորյանի, «Խորհրդատու» ՀԿ նախագահ

Տիգրան Շահինյանի, «Շահեն» երիտասարդական ՀԿ փոխնախագահ

Թաթուլ Կարապետյանի, «Մարտունի» ՋՕԸ տնօրեն:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի անդամների թափուր տեղերի համար քվեարկություն:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության արդյունքների ամփոփում:
3. Այլ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.

Հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

ա) ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը սեպտեմբերի 29-ին ժամը 08:45 ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Հովհաննիսյանին հանձնեց ԸՀ-ի կողմից հաստատված քվեաթերթիկները (փակ, մակագրված ծրարով):

բ) ԸՀ-ը ստուգեց և ընդունեց ընտրական քվեատուփը:

գ) Քվեարկությունը սկսվեց ժամը 9:00, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի նախասրահում:

դ) Ընտրացուցակներում որպես ընտող ԸՀ-ը գրանցել էր 262 (երկու հարյուր վաթսուն երկու) ընտրող, որից թեկնածուներ էին 51-ը (հիսուն մեկ):

ե) ԸՀ-ը ընդունեց 275 (երկու հարյուր յոթանասուն հինգ) քվեաթերթիկ, որը կազմում էր գրանցված 262 ընտրողների հարյուր հինգ տոկոսը (համաձայն Ընտրական Կարգի):

զ) Նախագահը հայտարարեց քվեարկության ավարտը ժամը 18:00-ին:

զ) Ըստ ընտրացուցակում առկա ստորագրությունների քվեարկությանը մասնակցեցին 248 (երկու հարյուր քառասուն ութ) ընտրող:

ը) Քվեարկողներին տրամադրվել է 248 (երկու հարյուր քառասուն ութ) քվեաթերթիկ:

թ) Չօգտագործված քվեաթերթիկների թիվը եղել է 27 (քսան յոթ): Դրանք մարվել են, ինչի մասին կազմվել է համապատասխան ակտ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.

Հանձնաժողով արձանագրեց հետևյալը.

ա) Քվեատուփը բացելուց հետո այնտեղ առկա է եղել 248 (երկու հարյուր քառասուն ութ) քվեաթերթիկ:

բ) Անվավեր քվեաթերթիկներ չեն եղել:

գ) Վավեր քվեաթերթիկների թիվը` 248 (երկու հարյուր քառասուն ութ):

ե) Թեկնածուների օգտին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ`

N	Կազմակերպություն	Ազգանուն, անուն	Ձայների քանակ
1	Աբովյանի «Սաթենիկ» բարեգործական ՀԿ	Միքայելյան Ֆրիդոն	3
2	«Ագրոգարգացում» ՀԿ	Ոսկանյան Աշոտ	113
3	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ	Մարտիրոսյան Սեյրան	59

4	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ԻԱՄ	Ղազարյան Էլեն	5
5	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ	Ավագյան Լիլիթ	45
6	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ	Միքայելյան Շիրակ	19
7	«Արարատ» ՋՕԸ	Բարսեղյան Վիլիկ	46
8	«Արաքս» ՋՕԸ	Մարիմյան Գայանե	25
9	«Արդարություն» ՀԿ	Կարապետյան Ժիրայր	29
10	«Արեգակ քսանմեկ» ՀԿ	Դադբաշյան Կարեն	3
11	«Արեգունի» սոցիալական զարգացման ՀԿ	Խաչատրյան Գայանե	5
12	«Արեն» սոցիալ-հոգեբանաառողջապահական ՀԿ	Հակոբյան Հասմիկ	0
13	«Բնակարանային-կոմունալ ոլորտի աշխատողների միություն» ՀԿ	Սարգսյան Ատոմ	1
14	«Բնապահպան տնտեսագետների երիտասարդական միություն» ՀԿ	Հովհաննիսյան Անդրանիկ	47
15	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» ԻԱՄ	Համբարձումյան Վարդան	76
16	«Գյուղատնտեսության զարգացում» Բարեգործական ՀԿ	Պետրոսյան Ալեքսան	5
17	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ	Մովսիսյան Կարինե	26
18	«Երիտասարդ Տավուշ» ՀԿ	Շահնազարյան Արմեն	21
19	«Եվրասիա» բարեգործական ՀԿ	Հովհաննիսյան Միլենա	1
20	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ	Արամյան Միքայել	7
21	«Ժոռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ	Բարսեղյան Լևոն	75
22	«Լիության տուն համայնքային կենտրոն» ՀԿ	Տարախչյան Գուրգեն	8
23	«Լոռե» էկոակումբ ՀԿ	Մելիքջանյան Մանյա	26
24	«Լույսի աստղ» ՀԿ	Առաքելյան Գյուլնարա	3
25	«Լուսածիր» Բարեգործական ՀԿ	Մաճկալյան Սաշիկ	25
26	«Կայունություն և առաջընթաց» ՀԿ	Նազարեթյան Սերգեյ	11
27	«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ	Վարդանյան Սուսաննա	6

28	«Կրթություն առանց սահմանի» ՀԿ	Մուրադյան Ռուզաննա	3
29	«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն ՀԿ	Բաղդասարյան Միքայել	2
30	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ	Հովհաննիսյան Արայիկ	51
31	«Հայաստանի Համայնքների Հանրապետական Ասոցիացիա» ՀԿ	Երիցյան Էմին	11
32	«Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհուրդ» ՀԿ	Սուքիասյան Արամ	35
33	«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ	Սարգսյան Մովսես	12
34	«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ	Մանուկյան Գևորգ	3
35	«Հայկական սերունդ» երիտասարդական ՀԿ	Բալայան Հայկ	35
36	Հաշմանդամների «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն ՀԿ	Օհանյան Սուրեն	13
37	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ	Սաքունց Արթուր	43
38	«Մեդվիկ» մանկապատանեկան ՀԿ	Հովհաննիսյան Վեհանուշ	44
39	««Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիա» ՀԿ	Բարեղամյան Արմեն	4
40	«Նաիրի» բարեգործական ընկերություն ՀԿ	Դաղբաշյան Սմբատ	2
41	«Նոր Սերունդ» մանկապատանեկան և երիտասարդական ՀԿ	Սերգեյ Գաբրիելյան	11
42	«Շենիկ» ՋՕԸ	Ղազարյան Տոնական	82
43	Շիրակի մարզի Հասարակական Կազմակերպությունների Միություն	Գևորգյան Գայանե	1
44	«Շողեր միություն» ՀԿ	Ասլանյան Հասմիկ	15
45	«Ջերմատնային ասոցիացիա» գյուղատնտեսական ՀԿ	Գևորգյան Պողոս	5
46	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ	Եղոյան Աբգար	15
47	«Տավուշի ֆերմերների» ասոցիացիա ՀԿ	Եսայան Ռաֆիկ	17
48	«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Բաղեյան Սաթիկ	3
49	«Ունիտոն» հատուկ կարիքներով մարդկանց աջակցության ՀԿ	Ալավերդյան Արմեն	26
50	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ	Սողոմոնյան Վանիկ	60
51	«Ֆերմերային շարժում» ՀԿ	Մեղրակյան Սարգիս	18

Այսպիսով, ձայների պարզ մեծամասնությամբ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի շահառուների խորհրդի 11 թափուր տեղերում ընտրվեցին հետևյալ անդամները.

N	Կազմակերպություն	Ազգանուն, անուն	Ձայների քանակ
1	«Ազրոզարգացում» ՀԿ	Ոսկանյան Աշոտ	113
2	«Շենիկ» ՋՕԸ	Ղազարյան Տոնական	82
3	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» ԻԱՄ	Համբարձումյան Վարդան	76
4	«Ժողովրդայինների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ	Բարսեղյան Լևոն	75
5	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ	Սողոմոնյան Վանիկ	60
6	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ	Մարտիրոսյան Սեյրան	59
7	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ	Հովհաննիսյան Արայիկ	51
8	«Բնապահպան տնտեսագետների երիտասարդական միություն» ՀԿ	Հովհաննիսյան Անդրանիկ	47
9	«Արարատ» ՋՕԸ	Բարսեղյան Վիլիկ	46
10	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ	Ավագյան Լիլիթ	45
11	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ	Հովհաննիսյան Վեհանուշ	44

Ընտրական հանձնաժողովի

*նախագահ՝ Մ. Հովհաննիսյան
քարտուղար՝ Ա. Աբգարյան*

անդամներ՝

Արտեմիս Լեփեջյան

Նունե Պեպանյան

Վահե Թազվորյան

Տիգրան Շահինյան

Թաթուլ Կարապետյան

Կարապետյան Թաթուլ, Թագվորյան Վահե, Շահինյան Տիգրան, ինչպես նաև մի շարք ԶԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. Ընտրական հանձնաժողովի անդամներին հավաստագրերի պաշտոնական հանձնում.
 ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյան
 ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրեն Ա. Ռասին
2. Շահառուների խորհրդի 2007-2008թթ. կազմի ձևավորում և ծանոթացում.
3. Շահառուների խորհրդի գործունեության և առաջիկա աշխատանքների կազմակերպչական հարցերի քննարկում.
 ա) Կառավարման խորհուրդ պատվիրակվելիք ՇԽ անդամների առաջիկա ընտրություններ.
 բ) ՇԽ նիստեր, հաճախականություն, որոշումների իրականացում.
 գ) ծրագրային հանդիպումներ.
 դ) ՇԽ հաշվետվություններ.
 ե) այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը: Նա նշեց, որ Շահառուների խորհրդի երկրորդ կազմի ձևավորումը հնարավոր է եղել կայացած ընտրությունների շնորհիվ, որոնք ուղղակիորեն կազմակերպել և անցկացրել է ընտրական հանձնաժողովը: Իրականացված բարեխիղճ և կազմակերպված աշխատանքների ապացույցներն են հանձնաժողովի անկախ գործունեությունը, ժամանակին ներկայացված փաստաթղթերի առկայությունը, ինչպես նաև բողոքների բացակայությունը:

Ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ իր գնահատականի խոսքն արտահայտեց նաև ՀՄԿ Հայաստանի ծրագրի տնօրեն Ա. Ռասինը: Նա ողջունեց ծրագրում կարևոր պայման հանդիսացող ժողովրդավարական ընտրությունների անցկացումը և շնորհավորեց նորընտրված ՇԽ անդամներին ընտրվելու կապակցությամբ:

Այնուհետև, Ա. Հովսեփյանը և Ա. Ռասինը ընտրական հանձնաժողովի անդամներին շնորհեցին հավաստագրեր՝ ի երախտագիտություն իրականացված աշխատանքների:

Մինչ նիստի պաշտոնական մասին անցնելը Ա. Հովսեփյանը շնորհավորեց նորընտրված ՇԽ անդամներին և հույս հայտնեց, որ նոր կազմի գործունեությունը կլինի արդյունավետ և կնպաստի ծրագրի իրականացմանը: Ա. Հովսեփյանն առաջարկեց ներկա ՇԽ անդամներին

ներկայանալ, ծանոթանալ միմյանց հետ և ընտրել նախագահող:

Շահառուների խորհրդի երկրորդ կազմի առաջին նիստի նախագահողի ընտրության համար ՇԽ անդամ Կ. Նազարյանը առաջարկեց հետևել նախորդ տարվա ավանդույթին և ընտրել ներկա անդամներից ամենատարեցին նիստը վարելու համար: Քննարկման արդյունքում ՇԽ անդամ Հ. Ջավադյանը միաձայն ընտրվեց նիստի նախագահող: Նախագահողը ողջունեց ընտրական հանձնաժողովի անդամներին և նշեց, որ հանձնաժողովի շնորհիվ ՇԽ երկրորդ ընտրություններն անցան շատ կազմակերպված և հաջող:

Այնուհետև, նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը կամ ներկայացնել դիտողություններ: ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը օրակարգի երրորդ հարցի ենթակետերի վերաբերյալ արտահայտեց այն դիրքորոշումը, որ ներկայացված հարցերը կանոնակարգվում են ՇԽ առաջին կազմի կողմից մշակված Կանոնակարգով և դրանց անդրադառնալու անհրաժեշտություն չկա: Առաջարկություն եղավ քննարկել միայն ա) ենթակետը: Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Քանի որ օրակարգի առաջին և երկրորդ հարցերը սպառված էին, նախագահողը առաջարկեց քննարկեց օրակարգի վերջին հարցը՝ **Կառավարման խորհուրդ պատվիրակվելիք ՇԽ անդամների առաջիկա ընտրությունները:**

Հանդես եկավ Ա. Հովսեփյանը և նշեց, որ մինչ այժմ ծրագրի Կառավարման խորհուրդը գործել է հանձինս ՇԽ անդամներ Ն. Վարդանյանի, Վ. Համբարձումյանի, Տ. Ղազարյանի, Կ. Նազարյանի և Վ. Սողոմոնյանի: Չնայած այն փաստին, որ նշված անդամները շարունակում են մնալ ՇԽ կազմում, համաձայն միջպետական Համաձայնագրի և ՇԽ Կանոնակարգի՝ պետք է անցկացվեն նոր ընտրություններ: Ա. Հովսեփյանը մասնակցեց, որ առաջիկա Կառավարման խորհրդի նիստը նախատեսվում է 2007թ. հոկտեմբերի 16-ին:

Նախահագողը ներկայացրեց ՇԽ Կանոնակարգում քաղաքացիական հասարակության անդամների Կառավարման խորհուրդ պատվիրակման դրույթները և առաջարկեց որոշել կազմակերպչական հարցերը՝ օրը, ժամը և տեղը:

Առաջարկվեց ընտրությունները նշանակել հոկտեմբերի 12-ին, ժամը 16:00-ին: Առաջարկությունը դրվեց քվեարկության և հաստատվեց 12 կողմ, 1 դեմ (Լ. Բարսեղյան) և 1 ձեռնպահ (Ս. Մարտիրոսյան) ձայներով:

Հանդես եկավ ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը և ներկայացրեց առաջարկություն կատարել փոփոխություն Կանոնակարգի՝ ՇԽ անդամների Կառավարման խորհուրդ պատվիրակման

դրույթում՝ նշելով, որ Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամները դուրս են գալիս ՇԽ կազմից և իրենց տեղերը լրացվում են առավելագույն ձայներ հավաքած ՇԽ թեկնածուներով: Ներկայացված առաջարկության կապակցությամբ ՇԽ անդամներն արտահայտեցին իրենց կողմ և դեմ մոտեցումները:

Լ. Բարսեղյանի առաջարկությունը դրվեց քվեարկության և շանցավ 11 դեմ, 3 կողմ (Լ. Բարսեղյան, Ս. Մարտիրոսյան, Վ. Հովհաննիսյան) և 1 ձեռնպահ (Ա. Հովհաննիսյան) ձայներով:

ՇԽ անդամները որոշեցին բոլոր կանոնակարգային փոփոխությունները քննարկել հոկտեմբերի 12-ին կայանալիք ընտրություններից հետո:

Ընտրությունների ձևաչափի վերաբերյալ ՇԽ անդամները սահմանեցին հետևյալը՝

1. Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող Կառավարման խորհրդի 5 անդամները ընտրվում են ՇԽ կազմից ՇԽ անդամների կողմից փակ, գաղտնի քվեարկությամբ մեկ տարի ժամկետով:
2. Կառավարման խորհրդի անդամների թեկնածուներ կարող են հանդես գալ բոլոր ՇԽ անդամները, բացառությամբ այն անդամների, ովքեր ընտրություններից առաջ հայտարարել են ինքնաբացարկ:
3. Քվեաթերթիկում կարելի է քվեարկել 5 թեկնածուի օգտին. ավել կամ պակաս նշումների դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:
4. Քվեաթերթիկների հաշվարկը կիրականացվի տեղում ՇԽ անդամների և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՈՐՈՇՈՒՄ. Կառավարման խորհուրդ պատվիրակվելիք ՇԽ անդամների ընտրություններն անցկացնել 2007թ. հոկտեմբերի 12-ին ժամը 16:00-ին ՀՄՀ-Հայաստան գրասենյակում՝ համաձայն ՇԽ Կանոնակարգի:

Նախագահողը հայտարարեց նիստի ավարտը ժամը 17:00:

Նիստի նախագահող - Հ. Ջավադյան

Նիստն արձանագրեց Վ. Գրիգորյան

Հոկտեմբերի 9, 2007

Նիստի արձանագրությանը կցվում է հաստիկ կարծիք, ՇԽ անդամ Լ. Բարսեղյանի